ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ԿՅԱՆՔ
(ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Չկա թերևս ավելի մեծ երջանկություն, քան որդիական նվիրվածությամբ սեփական ժողովրդին ծառայելը, առավել ևս, եթե այդ ժողովրդի իրավունքները ոտնահարվել, անիրավվել են դարեր շարունակ: Պատմական ճշմարտության և արդարության վերհանումն ու մարդկային հանրությանը ներկայացնելը մեծագույն սխրանք են: Նա, ով առնչվել է Վարդգես Միքայելյանի հետ, չի կարող իր վրա կրած չլինել նրա կրակոտ և հայրենանվեր խառնվածքի կրքոտ ու ոգեշնչող ազդեցությունը, հմայված չլինել վարակիչ և անխառն անմիջականությամբ, հայրենիքի ու ժողովրդի հանդեպ նրա սիրով: Վ.Միքայելյանի կյանքի նպատակասլաց ուղին քաղաքացու և գիտնականի նախանձելի ամբողջականության ճշմարտացի արտացոլումն է: Բնությունը նրան լիուլի օժտել է զգալու և խորհելու, մտորելու և արարելու աներկբայելի տաղանդով: Նրա կյանքի հիմնական դասը խղճով ու գործով հայրենիքին ծառայելն է, մի բան, որ նա կատարում է ամենայն բարեխղճությամբ և պատրաստակամությամբ: Վ.Միքայելյանի համար կյանքի իմաստը, իր ամբողջ հակասականությամբ, արարման և ոչնչացման իրարամերժ մոլուցքին հակադրվելու զարմանալի ներուժով Երևան Լեռավ Հայրենական պատերազմի արյունահեղ ու հերոսական տարիներին: Այստեղ նա գիտակցեց այն ճշմարտությունը, որ կյանքի իմաստը ստեղծագործելու մեջ է, և զորացրվելով բանակից, ընտրեց գիտության ուղին և հաստատապես ընթացավ այդ ուղիով: Նվիրվելով հայոց պատմության ուսումնասիրության վեհ գործին՝ նա հետազոտության նյութ դարձրեց այն հիմնահարցերը, որոնք խորը խորհուրդ ունեն, քանզի անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի լինելիության դարավոր խնդրին:

Վարդգես Ալեքսանի Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին, Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է խորհրդային բանակ և ծառայել հինգ տարի (1942 - 1947 թթ.): 1943 թ. հունվարից մինչև 1945 թ. մայիսը նա գտնվել է գործող բանակում, պարգևատրվել չքանշաններով ու մեդալներով:

Զորացրվելուց հետո 1947 - 1952 թթ. նա ուսանել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և ավարտել գերազանցության դիպլոմով: Ասպիրանտուրայում ուսանելուց հետո՝ 1955 թ. նա պաշտպանում է

թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական կուսակցությունները Հայաստանում 1918 - 1920 թթ.» թեմայով և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1955 - 1959 թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում:

1950-ական թվականների կեսերից ՀՀ ԳԱԱ-ն եղավ այն կենտրոնը, որտեղ ձևավորվեց Հայագիտության համար կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերի ծավալուն ուսումնասիրությանը: Վ.Մրքայելյանն իր հետագա գործունեությունը ամբողջովին կապեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային, նրա համակարգում զբաղեցնելով զանազան պաշտոններ՝ 1960 - 1972 թթ. Պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, 1972 - 1987 թթ. ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, 1988 թվականից՝ վերստին Պատմության ինստիտուտում բաժնի վարիչ, իսկ 1999 թվականից՝ միաժամանակ ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես» խմբագիր:

Մատայությունների այս համառոտ ցուցակից իսկ հետևում է, որ ակադեմիկոս Վ.Ա.Միքայելյանը ոչ միայն գիտությանը բոլորանվեր ծառայել է ավելի քան 45 տարի, այլև մեծապես սատարել է հայ պատմագիտական մտքի զարգացմանը՝ իբրև հասարակագիտական լուրջ հանդեսների խմբագիր:

1960 թվականից Վ.Միքայելյանը ձեռնամուխ եղավ միջնադարի ամենախոշոր հայկական գաղթաշխարհի՝ Ղրիմի հայկական գաղթօջախների 600-ամյա պատմության ուսումնասիրությանը՝ մի քանի պատմաբանների հետ մշակելով հայկական գաղութների պատմության հետազոտման հիմնական դրույթները, դրանով իսկ ուղի հարթելով հայոց պատմության այդ հույժ կարևոր բնագավառի ըստ ամենայնի ուսումնասիրության համար:

1964 թ. լույս տեսավ Վ.Միքայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմության» առաջին գիրքը, որը նա 1965 թ. պաշտպանեց իբրև դոկտորական ատենախոսություն: Նվիրված լինելով միջնադարյան Ղրիմի հայկական գաղութի հիմնահարցերին՝ այդ մենագրությունը նաև երևան հանեց հեղինակի իմացությունների լայն շրջանակը, քանզի այնտեղ լուսաբանվում են հայ-իտալական, հայ-ռուսական, հայ-ուկրաինական և հայ-լեհական հարաբերությունների վերաբերող բազմազան հիմնահարցեր: 1970 թ. Վ.Միքայելյանը հրատարակեց «Ղրիմի հայկական գաղութի պատմության (1800 - 1917 թթ.)» 2-րդ գիրքը, 1974 թ.՝ «Ղրիմի հայկական գաղթօջախների պատմությունը» (ռուսերեն), իսկ 1989 թ.՝ «Ղրիմահայոց պատմությունը»: Վերջին մենագրությունը նոր հայտնաբերված նյութերի ընդգրկմամբ տալիս է գաղութի ամբողջական պատմությունը սկզբից մինչև 1917 թ.: Վ.Միքայելյանի աշխատությունների ղրիմյան խմբին պիտի վերադրել նաև 1979 թ. հրատարակված «Մովսես Լ.Մ.Սերեբրյակով (Լազար Մարկոսի Արծաթագործյան)» ուսումնասիրությունը, որը լուսաբանում է ռուսական նավատորմի ականավոր ծովակալներից հայազգի Լ.Մ.Սերեբրյակովի կյանքն ու գործունեությունը: Այս աշխատությունը խիստ կարևոր նշանակություն ունի Արևմտյան Կովկասում անգլո-թուրքական սադրիչ գործողությունների դեմ Ռուսաստանի մղած պայքարի լուսաբանման առումով, մի հարց, որն այսօր խիստ արդիական հնչեղություն ունի Հյուսիսային Կովկասում ծավալված իրադարձությունների ստատուս քվոյահայտելու գործում:

Վ.Միքայելյանի ուսումնասիրությունների գիտական արժեքը մեծապես բարձրացնում է դրանց ազբյուրագիտական լայն ու ամուր հիմքը: Նա սիրում է արխիվներում աշխատել, հավաքել իր թեմային առնչվող բոլոր վավերագրերը,

հարկ եղած դեպքում հրատարակել վավերագրերի ժողովածուներ: Ղրիմահայ գաղթօջախների նպաստությամբ աղբյուրագիտական խիստ կարևոր գործ է 1974 թ. հրատարակված «Հայ-իտալական առնչություններ (Ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին)» ժողովածուն՝ ընդարձակ ներածականով և ծանոթագրություններով: Այն մեծ արժեք է ներկայացնում առհասարակ Տավրիդան երկրամասի պատմության համար: Նույնը պիտի ասել ծովակալ Լ.Սերեբրյակովը վերաբերյալ մեծարժեք փաստաթղթերի հրատարակման մասին (1973 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» պարբերականում, 12 մամուլ ծավալով):

Բնական է, որ այնպիսի մի լայնախոհ, հայրենասեր և եռանդուն գիտնական, որպիսին է Վ.Միքայելյանը, չէր կարող իր պրպտուն միտքը չկենտրոնացնել հայոց պատմության այնպիսի դրամատիկ և առանցքային հիմնահարցերի վրա, ինչպես Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Արցախի ազատագրության խնդիրները: Գերմաներենի իմացությունը և կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի ֆոնդերում աշխատանքը նրան հնարավորություն ընձեռեցին 1995 թ. ռուսերեն լեզվով լույս ընծայելու «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Թուրքիայում» գերմանական վավերագրերի ծավալուն ժողովածուն: Միաժամանակ, գերմանական նորահայտ նյութերի հիման վրա նա 1980-ական թվականներից սկսած հրապարակեց և՛ գիտական, և՛ հրապարակախոսական բնույթի մեծ քանակությամբ հոդվածներ և նյութեր, որոնք ծանրակշիռ ներդրում են Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում:

Նշանակալից է Վ.Միքայելյանի ներդրումը Արցախի հիմնահարցի ուսումնասիրության բնագավառում՝ և՛ գիտական, և՛ պրակտիկ առումով: Գաղտնիք չէ, որ արցախյան հիմնահարցը մշտապես գտնվել է հայ մտավորականության ուշադրության կենտրոնում: Այդ հարցը հատկապես սուր դրվեց 1969 – 1970-ական թվականներին: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ժողովներում բազմիցս քննվել է Արցախի հարցը: Գտնվելով այդ շարժման առաջին շարքերում, Վ.Միքայելյանն անձամբ այդ ժողովի որոշումները հղում էր ՍՄԿԿ Կենտկոմ: Միաժամանակ, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր եղած տարիներին նա, Հայաստանում լինելով առաջինը, ամսագրում լայն տեղ հատկացրեց Զ.Բունիաթովի և նրա խմբի հակագիտական ու հակահայկական գործունեության մերկացմանը և արցախյան հիմնահարցի լուսաբանմանը: Այն ժամանակներում դա քաղաքական սխրանք էր: Սրան զուգընթաց, երբ 1988 թ. պոռթկաց Արցախյան շարժումը, Վ. Միքայելյանը գիտական մեծ գործունեություն ծավալեց լուսաբանելու և հանրության սեփականությունը դարձնելու այն փաստաթղթերը, որոնք մերկացնում են մեծ տերությունների խարդախ և եսասիրական քաղաքականությունը Արցախը Հայաստանի գրկից պոկելու խնդրում: Նա գլխավորեց այն մեծ ժողովածուի կազմման և խմբագրման աշխատանքները, որը լույս տեսավ 1992 թ. ռուսերեն լեզվով՝ «Լեռնային Ղարաբաղը 1918 – 1923 թթ.» վերտառությամբ: Ժողովածուի ներածականում Վ.Միքայելյանը ճշտիվ շեշտը դնում և մերկացնում է Մեծ Բրիտանիայի, նրա ներկայացուցիչների, ինչպես նաև ՌԿԿ Կովկասյան բյուրոյի անփառունակ դերը Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքից անջատելու և Ադրբեջանին ընծայելու գործում: Այդ հիմնարար ժողովածուից զատ, նա հանդես եկավ տասնյակ գիտական ու հրապարակախոսական ընույթի հոդվածներով, որոնք տպագրվել են նաև արտասահմանյան պարբերականնե-

ում: Արցախյան շարժման եռուն շրջանում՝ 1990 - 1991 թթ., Վ.Միքայելյանը հիմնադրեց և հրատարակեց «Գոյամարտ» լրագիրը, որի էջերում մեծ տեղ էր տրվում պատմահայրենասիրական հարցերի և արցախյան հիմնախնդրի լուսաբանմանը:

Վ.Միքայելյանի գործունեության մեջ նշանակալից տեղ է բռնում մանկավարժական աշխատանքը: Շուրջ երկու տասնամյակ նա հատուկ դասընթացներ է դասավանդել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում՝ արժանանալով ուսանողության սիրուն և հարգանքին: Միաժամանակ, նրա ղեկավարության ներքո պատրաստվել են տասնյակից ավելի գիտության թեկնածուներ:

Այսպիսով, ակադեմիկոս Վ.Միքայելյանի գիտական հետաքրքրությունները ծավալվել են չորս կարևոր ուղղություններով՝ ա) Հայաստանի ղյուղացիության պատմություն, բ) Հայկական գաղթավայրերի պատմություն, գ) Արցախյան հիմնահարց և դ) Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Նշենք, որ պատմաքննական ուսումնասիրությունները նրա աշխատություններում շատ հաճախ զուգորդվում են աղբյուրների հրատարակմամբ:

Սակայն այսքանով ամենևին չի ավարտվում ակադեմիկոս Վ.Ա.Միքայելյանի ծառայությունը հայրենի պատմագրությանը: Անուրանալի է նրա գիտախմբագրական գործունեության նշանակությունը հայագիտության զարգացման գործում, ինչպես նաև գիտակազմակերպչական գործունեությունն առհասարակ: 15 տարի շարունակ նրա խմբագրությամբ լույս տեսած «Լրաբեր» ամսագիրը վիթխարի դեր խաղաց հայագիտության առաջընթացի ասպարեզում: Այդ աշխատանքում դրսևորվեց նրա՝ իբրև գիտական-խմբագրի յոյնտխոհությունը, ճշմարտացի հայրենասիրության պատվաստումը: Եվ այժմ ուրախալի է, որ նրան է վստահվել մի այնպիսի պատկառելի պարբերականի խմբագրումը, որպիսին է «Պատմա-բանասիրական հանդեսը»: Ցանկանք վաստակաշատ հորելյարին առողջություն և հետագա բեղմնավոր գործունեություն:

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ,, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՎԱԼՏԵՐ ԴԱԼԻՈՅԱՆ, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր